

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒՂԴԱՑԱԿԱՆՈՒՄ
ԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՈՒՏԲՈՒՄ.**

Բուդդայականութեան տարածուիլը Եւրոպայում. արեւմտեան փիլիսոփայուրեան, զիտուրեան, գրականուրեան եւ նաւտարապեսուրեան մէջ բուդդայական հայեացցների մուտք գտնելը. բուդդայական հաւատոյ հանգանակը եւ բուդդայականների յոյսերը. Բուդդայականուրեան տարածման պատճառները. ա) Քրիստոնեուրեան եւ բուդդայականուրեան՝ Երկու նիմնադիրների կեանի մէջ եղած նմանութիւնը. բ) Երկու վարդապետութիւնների նիմնական կետերի նմանութիւնը: Այս նմանութիւնը բացառող ենրադրութիւնները եւ սոցա անհատանութիւնը: Քրիստոնեուրեան եւ Քրիստոնեուրեան սկզբունքների տարբերութիւնը: Քրիստոնեուրեան առաւելութիւնը:

Յուգդայականութիւնը Եւրոպայում և Ամերիկայում մեծ ձեռք բերեց և ունեցաւ այնտեղ չը լսուած յաջողութիւն սկսած 50 տարուց ի վեր: Այժմ Եւրոպայում և Ամերիկայում խկապէս ասլում են Հնդկական վերածնութեան, Հնդկական հնութիւնների վերակենդանութեան դարում, և մեզ մեծ զարմանք է պատճառում, թէ ինչպէս Հնդկաստանի հեռաւոր անկիւնում աղբատութեամբ ասլուզ մի կրօնաւորի՝ սորանից 2400 տարի առաջ մտածած և մոռացուած մտքերը,—որ յետոյ Բուդդայի յաջորդներից սխալ էին հասկացուել և նոյն իսկ վերին առավճանի փոփոխութեան և ազաւազման ենթարկուել՝ երեան Եկան XIX դարում քրիստոնէական կեանքի մէջ իրենց սկզբանական գրութեամբ և որոշ ձեւ ընդունելով, այժմ՝ հարկազբում են հետեւել իրենց բաւական խելօք գլուխների: Կարծես թէ քրիստոնէական կրօնը, որը շատ շուտ գագարել էր պաշտամունքի տռարկաց լինելուց և փոխարինուել էր յունաց, հռոմէացւոց և գերմանացւոց չառաւածներով, որը չէ գագարում նոյն իսկ ներկայ ժամանակիո մէջ կռիւ մզել հեթանոս աշխարհի ընական և բաղադրական կրօնների դէմ, ոյտք է վճռողական մի կռիւ ևս մզէ «Ամերիկա—Մունիսի-ի» (Տնկառու) հաւատքի դէմ և ապա թէ կարողանաց սորան վերջնականապէս յազմել: Աշխարհի այս երկու կրօնները կանգնած են միմիեւանց հանգէստ և այսօք Բուդդան նոյն իսկ քրիստոնէանների մէջ ոչ պակաս հաւատարիմ և հզօք կողմ-

նակիցներ ունի: Սկսած այն օրից, երբ Արտուր Շռաքնահառուէրը քուգդայտկան փիլիսոփայութեան հիմնական գաղափարները իւր տեսութեան (սիստեմա) մէջ մտցրեց, այսինքն՝ իւր վարդապետութեամբ կեանքի տանջանքի մասին, զէպի կեանքը ունենալիք: Երբե պատճառ տանջանքի՝ կամքի մասին, ապա մահուամբ սոյն կամքի դադարման և լերջապէս դէպի կեանքը ունեցած կամքը մեռցնելու ճգնաւորական պարագի և միայն դէպի նիրվան (անզգայութեան մէջ ընկնելը) ձգտելու մասին,— Բուգդայտկան յունեան ոգին բաւական ճիւղաւորուեց և տարածուեց մեր գիտակցութեան մէջ և առաջ ըերեց մեծ գրականութիւն: Դիմաւորապէս յայտնի են բուգդայտկան հաւատոյ երկու հանգանակներ. սոցանից մէկը, որ տարածուած է Անգղեայում և Ֆրանսիայում հազարաւոր օրինակներով, օկկուլիտիկական աշխանդաւորների հիմնագիր և թէօսուփիական համայնքի նախադահ Օլկոտ զօրապետինն է, որ կազմել է Յէլոնում գտնուող Սինգալէզի քահանայապետ Սումանգալայի (Samangala) աշտակցութեամբ, իսկ միւս հանգանակը, որ շատ յայտնի է Գերմանիայում, Սուբադրա Ռիկշու (Subadra Rhikshu) գերմանացու հեղինակութիւնն է, որը քրիստոնեայ եղած ժամանակ Ֆրիդրիխ Ֆիմերման անունն էր կրում: Այս գիրքը գրուած է յատկապէս գերմանացիների մէջ բուգդայտկանութիւն տարածելու համար, և իսկապէս մեծ յաջողութիւն է ունեցել: Այս գրքի մէջ արծարծած գաղափարներից ամենից առաջ մէկը առանձին յաջողութիւն ունեցաւ և հաւատացեալների մեծ բազմութիւնն ձեռք ըերեց. այն է՝ ոգիների տեղափոխութեան և նիրվանի հանգստեան վարդապետութիւնը: Եթէ առաջ այդպիսի տեսութիւնը կարելի էլն համարում միայն Զիօրգանո Բրունօ (+1600 թ) և նոյն իսկ Լեսոսինզը (+1781 թ), այժմ հազարաւորներն են ապաւինում նորան: Աւգուստ Ֆէննին Դրեզդենում հիմնել է մի ամբողջ հաստատութիւն, որի նպատակն է թէ գիտնական և թէ գրականական տեսակէտից նպաստել ոգիների տեղափոխութեան վարդապետութեան տարածմանը, և նա, ով մի փոքր խոր է թափանցում ներկայ ժամանակիս մտաւոր հոսանքների մէջ, ոկտար է որ նկատէ բազմաթիւ հետքեր բուգդայտկան այդ գաղափարների՝ թէ գիւղարուեստի, թէ երժշառութեան և թէ գրամայի մէջ: Օրինակի համար կը յիշեմ Իրսէնի գրամաները՝ «Բագաւորը և Գալկէացիք», առանձնապէս Բիչարդ

* Համամատել Կինդեկմանի սոյն խնդրին վերաբերեալ հակադրութիւնները իւր գրուածի մէջ Եսդայմъ, պессимизъмъ и современное мировозрѣніе. Essen 1898.

Վաղների «Պարսիկալ» և «Տրիոտան» և Կպուգա».* Խմանապէս անթիւ փորձեր կատարուում են նաև քրիստոնեաների կողմէց, որպէս զի համեմատութեան մէջ գրուի այդ վարդապէտութիւնը սուրբ Պրքի վարդապէտութեան՝ մարմնի վերանորոգման հետ, և Յիոստանին յայտարարեն աւետարեր նոյն վարդապէտութեան: ** Վերջապէս կան մարդեկ, որ մի քայլ էլ այն կողմն են դնում և քրիստոնէութիւնը ծագած են համարում բուգայականութիւնից կամ ուղղակի Քրիստոսի միջոցով և կամ անուղղակի աւետարաների գրական կեղծումների միջոցով: Շոպէնհաուէրը, որն արդէն հաստատում էր, թէ «Քրիստոնէութեան ներքին ուերմը և ոգին նոյնն է, ինչ որ բարհմանիզմի և բուգայականութեան մէջ», *** — որովհետեւնորա հայեացքով, ժառանգական մեզքի (Bejahung des Willens), քաւութեան (Werneinung des Willens) վարդապէտութիւնը կազմում են քրիստոնէութեան ամենագլխաւոր ճշմարտութիւնները: Իսկ մնացածը միայն զարգացումն է և տրտաքին պատիաներ, — այն կարծիքն է յայտնել, որ «Քրիստոնէական ուսմունքներն առնուած են որևէ միջոցով հնդկական կրօններից»: **** Գորանից յետոյ աշխատում էին այլ միտքը հաստատել թէ զիտական և թէ ոչ զիտական հիմունքներով, որը մանրամասը կը բացարուի հետեւելում:

Ոյստեղ պէտք է միայն յեշատակել, որ 1898 թ. Զիկագոյում կայացած կրօնների կօնդրէսում բուգայականութիւնը աշխարհի սոլոր քրիստոնեաների առաջ արտայատուեց կատարեալ աղատութեամը և կային սկնդողներ, որ քրիստոնէական զաւանութիւնները ուշ այլ ինչ են, եթէ ոչ նոյն բուգայականութիւնը հրէական հագուստի մէջ» և որ «Խարեւայութիւն» կը լինէր, Քրիստոսի յայտնութիւնը իրքեւ նախանկար (оригинальность) ընդունել:

Զարմանալի չէ, եթէ այսպիսի հանգամանքների մէջ առաջ եկան բուգայական համայնքներ: «Բարոյական» և «Թէսոսովիւական» ընկերութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ բուգայական արմատներից ծագած շառաւելղներ: Ֆրանսիայի մայրաքաղաքում, 1897 թուի արևելագէանների ժողովի վերջը, բուգայական մի քահանայ յայտնի և կը թեալ ֆրանսիացիների ընտրեալ հասրակութեան առաջ մի պատարագ մատուցեց, որի ժամա-

* К. Андерсенъ „Ученіе о возрожденіи на теистической основѣ“, Hamburg. 1896 и Е. Дицель, „Правда, милость и возрождение“ Braunschweig. 1896.

** Міръ какъ воля и представлениe. Т. 2-ой стр. 623.

*** Նոյն, Т. I. стр. 480.

նակ բոլորին զեղին ժապաւէններ բաժանեց (զեղին զոյնը բուդ-
դայական կուսակրօնների հազուստի սեպհակոն նշանն է), իսկ
պատրագից յետոյ թոյլ տուեց ամեններին այդ ժապաւէններից
մի կտօր իրենց տուն առնել: Բարձր և վստահ կերպով է
հնչում արդէն Բուդդա-Գոտամի (Buddha-Gotama) Յիսուս Նազու-
րեցու վերայ տարած յաղթանակի ձայնը: Վերոցիշեալ բուդ-
դայական հանգանակի մէջ զբռեած է. Յուդդայականութիւնը
եւ բուդդայ ապագայ կրօնն է, որովհետեւ նա ոչ թէ միայն հա-
ւատի գործ է, ինչպէս «Յայանութեան» միւս կրօնները, այլ գի-
տութեան և համազմունքի, ազատ, արդար, մի միայն իրեն հու-
ւատացող մարդկութեան հաւատն է, որն ոչ մի ասաւածային
օգնութիւն չէ պահանջում և ոչ մի ասաւածային բարկու-
թիւնից չէ վախենում: Յայտնի հնդկագէտ և «Գհամմապագամ»-ի
(Dhammapadam) թարգմանիչ Կարլ Եւգենիի նեյմանը շնորհա-
ւորում է հնդկական վերածնութիւնը հետեւեալ խօսքերով. «վեր-
ջապէս մեր հորիզոնի վերայ ևս ծագեց բուդդայական վարդա-
պետութեան լոյսը, նա կը լուսաւորէ այն բոլորին, որոնք
կարող կը լինին տանել այդ լոյսը:»* Խոկ մի ուրիշ գիտնական
դրում է. «Յուդդայական գրուածները հետախուզողին հասկա-
նալի» կը լինին, եթէ նա միայն «Ուպանիշադ» (Upanischad) և բուդ-
դայական «Սուտա» (Sutta) գրուածքներով զբաղուելու ժամա-
նակ յիշէ վին և նոր ուխտի ասուուածայայտ խօսքը, որպէս
թէ նա մութ, խուար և մառախլապատ հօվակը գուրս գալով
բարձրացաւ սարի գլուխը և այնաեղ թափառում էր պարզ եր-
կնքի տակ արեգակի լուսոյ և ազատ եթերքի մէջ»:**

Յուդդայականութեան նմանօրինակ դովաբանութիւնը վեր-
մանացիների միջոցով օրէցոր զօրեզանում է: Նախ և առաջ մեր
առաջ հարց է ծագում, ի՞նչն է քրիստոնեայ աղջութիւնների
մէջ բուդդայական վարդապետութեան տարածման պատճառը,
և ինչի՞ մէջէ նորա յաջողութեան գաղտնեքը: Արդեօք մեր ժամա-
նակի յոռեանես-թմրեալ շարժումն է, որ մզում է մի քանի
յոդնած, կեաննքն ատող հոգիներին բուդդայականութեան գիրկը:
Ե՞սա արդեօք դաւաններից (dogma) ազատուելու ձգտում և
կրօնի պարզ բոցիննալիքը, առանց Աստուծոյ էտութեան, ազօմքի,
հրաշքի, առանց մեր այն խորին հասկացողութեան մեղքի և թու-
զութեան մասին, որոնց բացակայութեան շնորհիւ աւելի է զբա-
ռումն բաւականութիւն սատնում մեր լուսաւորեալ դարի մատ-

* «Предисловие къ буддийской онтологии» стр. 12

* Т. Шульце. «Круговоротъ жизни и прочный покой». стр. 2.

ծող մարդկութիւնը՝ քան Քրիստոսի վարդապետութեամբ Առառւծոյ էութեան, հրաշքների և մեղքի թազութեան մասին։ Նատ կարելի է, որ շատ շատերը բուդգայականութեան գրաւչութիւնը դունում էն նորա վհաա, աշխարհային վշտով թափանցուած տրամադրութեան, գլխաւորապէս խելօք, բարոյական ընաւորութեան մէջ, որը հոգու ամեն տեսակ գովառանք աւելորդ է համարում, — բայց մենք այնու ամենայնիւ բուդգայականութեան արժէքը շատ նուազեցրած կը լինէինք, եթէ ներկայումս ըստ ցանկանացինք ճանաչել նորա բարոյականութեան ճշմարիտ բովանդակութիւնը և նորա վսեմ նպատակները։ Քրիստոնէութեան և բուդգայականութեան ինչպէս ծագման էլ վարդապետութեան բովանդակութեան մէջ զարմանալի և ապշեցուցիչ նմանութիւններ կան։ Եթէ մենք կարողացանք մեզ ներկայացնել այդ զուգահեռական նմանութիւնները ամբողջութեամբ, այն ժամանակ մենք շատ հեշտ կը հասկանանք բուդգայականութեան աղղեցութեան ուժը։

Մի համեմատութիւն գնելով երկու հիմնազիրների կեանքի մէջ, այդ նմանութիւնները աւելի են աշքի ընկնում։ Երկու հիմնազիրներն էլ ծնուել են արեելքում, Ծնդկանտանի և Պաղէստինի հեռաւոր անկիւններում — մէկը Կապիլավաստում (Kapilavasta) և միւսը Ըէթղէհեմում, երկուսն էլ թագուորական ցեղեց, արքայորդի Սիդդհարտան (Siddhārta) իշխան Սուդհարդանի (Suddhādana) և Մայայի (Māya) որդին էր, հին Ասկիա ցեղ (Sākyā), այդ պատճառով էլ յետոյ կոչուեց նաև Ասկիա-Մայի (Sākyā-mayī), Ասկիա տոհմի իմաստունը։ Նոցա ծննդեան հետ ևս կապուած են զարմանալի պատահարներ և երեսյթներ։

Բուդգան մարդացաւ, սպիտակ վիզի կերպարանքով մտնելով մօր աջ կողքը. և այդպիսով երկու կրօնների հիմնազիրները աշխարհ եկան անարատ Մայայի և Մարիամ կոյսների միջոցով։ Բուդգայի ծննդեան ժամանակ ևս, ինչպէս Աւետարանում Յիսուսի ծննդեան ժամանակ, երգում է երկնային զօրքը — «Փառք ի բարձունս Աստուծոյ» — կարեկցութեամբ լի մի զարմանալի և անօրինակ հերոս ծնուեց աշխարհի վրկութեան համար, նա այսօրուանից բարիք կը տարածէ դէպի աշխարհի ամեն կողմ։ Գորանից յետոյ Հիմալայեան լեռներից գալիս է Ազիտան (Asita), ըստ Աւետարանի Սիմէօն, և մարդարէանումէ մանուկ Բուդգայի ապագայ յատկութիւնների մասին, որ նա պիտի լինի վրկիչ ամեն չարիքների։ Ինչպէս որ օդի միջով եկել էր, նոյնպէս էլ վերագառնում է իւր առանձնարանը, արտասուր թափելով, որ

մինչև փրկութեան ժամը չը ովեած առլէ: Երկուսն էլ մեջացան
անմեղութեան մէջ: Մի անգամ որքայորպին զուրս եկաւ և
իւր ուղղեկիցների հետ մի փոքրիկ անտառի մէջ մոլորուեց:
Նրկելով ափում է ամբողջ թագաւորական տանը: Հայրը իւր
հետեւորդ ժառաներով մնարում է և զանում է նորան երկնա-
ցին ողիներով շրջապատռած, որոնք վառարանում էին նո-
րան: Խերը մանուկը նստած էր ծառի ստուերում, և խորա-
սուզուած էր խոշին մատաղը զութիւնների մէջ, որոնք նորան
գերաշխարհային երկրներն էին աեզափախել: Ո՞վ չի յեշիլ այս-
տեղ 12 տարեկան Յիսուսին տաճարի մէջ: Սորանից յետոյ նոցա-
կեանքի մասին ո՛չ մի տեղեկութիւն չունենք մինչև նոցա զոր-
ծունելութեան առպարէց զուրս զարք: Աերին առաջնանի զար-
ժանալի զիսդուածներ մզում են երկուսին ևս միենայն հասակի
մէջ—բուզզամ 20, խոկ Յիսուսը 30, գէպի առանձնութիւն, ծո-
մապահութիւն և կոխւ և առա երկուսն էլ հաւասարապէս
յաղթում են փոքրիչին (ստանուային): Մինչ Յիսուս անա-
պատում փնտուում էր միջոցներ և ճանապարհներ Աստուծոյ
թագաւորութիւնը հաստատելու համար, Բուզզամ նախ և
առաջ կուի է մզում չարութեան առառած Մաքայի (Māgā)
և սոխա զստեր զայթակցութիւնների և պատրանքների գէմ:
Յօդհի (Yodhi) ժառի տակ նստած զտու նա մոքի ազատու-
թիւն, որից յետոյ պէտք է առանց մի որեէ բան քարոզելու
նիրվանի մէջ ընկզմուէր. «Եթէ ևս այժմ սկսեմ յայտնել իմ
վարդապետութիւնը և ինձ չը հասկանան, այն ժամանակ այդ
կրպատաճառէ ինձ միայն ոյժի և աշխատանքի սպառումն»: Բայց
երբ երկուսն էլ յաղթեցին իրենց, զուրս են զարիս քարոզելու
և նոցա քարոզի առաջին խօսքը հզօր կերպով հնչում է ժո-
զովրդի ամեն մի զաստկարզի մէջ: «Եռորի համար բաց է յա-
ւիտենականութեան զռները՝ ով ականջ ունի, թ'զ լսի խօսքը
և հաւատու, նման Յիսուսի կոչին. «ապաշխարեցէք, որովհետեւ
մօտեցել է Աստուծոյ թագաւորութիւնը»: Յետոյ երկուսն էլ
աշակերտներ են վիստուում միասին զործելու համար, Բուզզամ
սկզբում ունէր 5 և յետոյ 60 աշակերտներ, որոնք միօխօնու-
րական գործի համար առանձին խրատներ ստանալով, ուզար-
կեում են աշխարհ, խոկ Յիսուսը սկզբում ունէր 12, որոնց վերայ
աւելացաւ յետոյ 70 աշակերտ: Աշակերտների այս շրջաններից
աշքի են ընկնում միշտ իրարից բոլորովին տարբեր երեք անձ-
նաւորութիւններ, Սարիփուարա (Sariputra)—բուզզայական Պետ-
րոսը, Անանգա (Ananda) Բուզզայի յայտնի սիրելի աշակերտը,
որ իւր ուսուցչի մահուանը ներկայ էր և նորա հետ զերջին

Խօսակցութիւնն ունեցաւ ու նորա կտակն ստացաւ, և Գեշտազատա (Devadatta) որը իւր հօրեղբօրսորդի Յուղդավինաձերսի, նորա վարդապետութեան մէջ հերձուած առաջ բերեց և հալածում էր նորան իւր կենդանութեան ժամանակ: Յա բուզայական Յուղան է: Արկուան իս իւրենց աշակերտներով միտոսին շրջում էին քառոզելով, բժշկելով, հրաշըներ գործելով, առանց կաթե, աղբատ, անպատճապարան, ամուրի, առանց մի որե է պահանջի և առանց նիւթակոն ուժ գործազրելու: Մինչ մեր Փրկչի համար կերակուր էին ըերում իւր աշակերտները կամ քարեկամ—համակրողները, Յուղա Գողաման ամեն առաւոտ զեղին զդեստով, սափրած գլխով, ման էլ զալիս անից տուն ոգարմութեան պոյտը ձեռքին, աշքերը գետին խոնարհած, լուս և հեղ սպասելով կերակրի, ինչ որ կտան նորան: Կէս օրին նատում էր նա խաղաղ սենեակում և կամ անտառի զով ստուերի մէջ, ուտում էր և յետոյ ընկղմում մտածողութիւնների մէջ, մինչև որ երեկոյեան զէմ մեղմանում էր արեգակի տապը և նա վերագուռում էր կրկեն իւր բարեկամների և թշնամիների ազմկալից գործերին: Երկու հիմնադիրներն ես ժաղավրդի թէ բարձր և թէ ստորին գասակարգի հետ յարաբերութեան մէջ էին մանում, հաշում էին յայտնի անձնաւորութիւնների հետ, որպէս զի գարձեալ վերագառնան անապատ կամ սարի գլուխը և կամ խաղաղ անտառը, այնտեղ քարոզելու և կամ խնդնիկման համար: Փրկչի համար ամենասիսելի ակղեցից մէկը Գեթսեմանի այգին էր, իսկ Յուղայի համար նատավանայի (Tetavana) ճեմելիքը: Հատ գժուար էր կոփւ մզել երկու հիմնադիրների համար էլ իւրենց թշնամիների զէմ, որոնք իւրենց ազգային կրօնիներեայացուցիչներն էին: Յուղան կոփւ էր մզում բրահմանների զէմ: Եւ սորա համար շատ հեշտ էր կուել մի շատ թոյլ կազմակերպուած, ժողովրդից ատուած, բարոյական յայտնի պակասութիւններով ազականուած գասակարգի զէմ, քան Յիսուսին՝ կրօնամու, մեծ ուժի և ազգեցութեան տէր և սերտ կերպով միացած փարենեցիների ժողովի զէմ: Մուրեալ Ամրապալի (Ambarali) կինը աղջեց Յուղայի խօսքերի, հրաւերեց սորան իւր տուն ճաշի, և թէպէս բժիշկները զարմանում են—ինչոր իմարիսեցիները Դուկ: Է. 37. պատմութեան մէջ մեղաւոր կնոջ վերայ, և աշխատում խանդարել հրաւերը, բայց Յուղան զնում է: Զզջացող կինը նստում է Յուղայի ստների մօտ ցածր նստարանի վերայ և լուս է մեծ վարդապետին և ապա իւր տունը ընծայում կրօնաւորների կարգին: Յայտնի է և հետեւալ պատմութիւնը: Անանդան երկար ժամ

մանակ ճանապարհորդելուց յետոյ պատահում է ժողովրդեց ատուած «չանդալա» (Tschändälás) գասակարդից մի աղջկայ, որը ջրհորից ջուր էր հանում և խնդրում է որ իրեն ջուր տայ: Աղջկը պատասխանում է, որ ինըը «չանդալա» գասակարդից է, այդ պատճառով և իրեն անհնարին է սուրբին մերձենալ: Դա պատասխանում է: «Քոյք իմ, ես քեզ հարցնում եմ ոչ թէ գասակարդի, տեղի մասին, այլ քեզանից խնդրում եմ միայն մի ուժագութը»: Նարունակութեան մէջ պատմում է աղջկայ գարձը, որ պատահաբար անցնում էր Բուդգայի մօտով և Սա էլ Անանդայի հետ կենդանի մասնակցութիւն ունեցաւ աղջկան միաբը պարզելու: * Դրանից յետոյ երբ երկուսն էլ նախադուշակում են իրենց մահը, Բուդգան 80 տարեկան հասակում, 45 տարի գործելուց յետոյ (50 թ-480 ն. թ.) ճաշակելով իրեն ուզարկուած խոզի միսը, կայցակի, որոտի և զարմանալի հրաշալիքների տակ մեռնում է, ինչպէս Քրիստոսը խաչի վերայ երեք տարուայ գործունելութիւնից յետոյ, 33 տարեկան ծաղիկ հասակում: Երկուսն էլ իրենց հետնորդներից ճանաչուած են իրեն Աստուած և յիշւում են աղօթքների մէջ: Մասունքները՝ Բուդգայի ատամը և Քրիստոսի զգեստը, խանձարուը և կենաց փոյտից մի կտոր յարգւում են իրեն գերբնական զօրութիւն ունեցող սրբութիւններ:

Ու պակաս նմանութիւն կայ նաև երկու հիմնագիրների վարդապետութիւնների մէջ: Երկուսն էլ առաջ եկան բրահմանական և հրէտական հին քրմական կրօններից, քաղեցին նորանց կրօնական և բարոյական ուժի ամենալաւ մասը և միմնոյն ժամանակ ամենալաւը միացրին իրենց վարդապետութեան հետ Բուդգան իւր վարդապետութիւնը կազմեց հետեւեալ հիմքերի վերայ: Նիհիլիստական (ոչնչական) միլիստիայութեան եղբակացութիւն, որ առաջ է եկել բարդմաստուածեան բրահմանիզմից, անաստուածութիւն, Վեզայի, զօհարերութեան, քահանայապետութեան և ոռու հետ դասակարգերի բաժանման մերժումն, յետոյ կուսակրօնութեան հիմնարկութիւն, հոգիների տեղափոխութեան վարդապետութիւն և կրօնի էութիւնը զործոլութիւնից հաստատուն գիտակցութեան վերածելը: Յիսուս Քրիստոս հրէտաների հաւատնեալ Աստուած, Աստուեծոյ գալիք թագաւորութիւնը Մեսիայի ձեռքով, ո. զրքի հեղինակութիւնը, յաւիտենական կեանքի ճշմարտութիւնը և կրօնի՝ իրեն

* Рудольфъ Зейдельъ. Евангелие Иисуса Христа въ его отношении къ показанию о Буддѣ. стр. 186. Leipzig 1882.

մաքուր որտեղ բարեպաշտութիւնը որբացնողի-մաքարէական հասկացողութիւնը միացը եց նոր շաղկապոլի՛ և դորանից ստեղծեց բոլորովին մի նոր աւետարան։ Բայց որքան էլ երկու կրօնական վարդապետութիւնները տարբեր թուան մեզ, այնուամենայնիւ նոցա հիմունքները զարմանալի կերպով հոգու փըրկութեան վարդապետութեան մէջ ի մի են ձուլում։ Այն խորին գիտակցութիւնը, որ պառակտում է մարդուս միտքը՝ թէ մարդ ե՞նչ է և ի՞նչ պիտի լինի, գաղափարի և ճշմարտութեան, ջերմաջերմ ցանկութիւնը ճնշող շղթաներից ազատուելու և այդ ներկայացրուած նպատակին իրքու մի բարձր բարեքի հասնելու, ստիպել է վրկութեան գաղափարին երկու համաշխարհային կրօնների մէջ կենդրոնական տեղը տալ։ Բուգդան ասում է, «Գուք աշակերտներ, լնչպէս որ մեծ ծովը ունի միայն մի համ, այն է աղի համ, այդպէս էլ զուք ողէտք է մի վարդապետութեան, մի օրէնքի համ ունենաք, այն է՝ վրկութեան համ»։ Վերին աստիճանի լրջութեամբ Բուգդայի հետևողները կոչւում են կռիւ մղելու մեղքի դէմ, որի արմատը ինքնասիրութիւնն է։ Այստեղ ոչ զոհերը կօգնեն և ոչ զործերը, այստեղ մի միայն մտքերի փոփոխութիւնը կօդնէ։ Մեզ համար կոչում է նոր ուխտ, եթէ մենք կարգում ենք «ոչ թէ նա է իսկապէս մեծ հերոսը, որ պատերազմի դաշտում տասնեակ հաղարաւորների կը հարուածէ, այլ մի միայն նա, որ կը յաղթէ իրեն» «ով իսկապէս իմաստուն է, քայլ առ քայլ, սովէ առ ըովէ պիտի պաշտպանէ իւր եսը ամեն տեսակ անմաքրութիւնից, այնպէս՝ լնչպէս ոսկին մաքուր է արծաթից»։ «Ոչ ոք չըպետի կապուի աշխարհի հրապոյքի և հաճոյքի հետ», լնչպէս որ զբուած է Յովհաննէս առաքեալի ա։ թղթի մէջ. (Բ. 15, 17.)։ «մի սիրէք աշխարհ և ինչ որ նորա մէջ է, որովհետեւ թէ աշխարհը կանցնի և թէ նորա ցանկութիւնը»։ — Այս է կազմում և բուգդայական ամեն մի քարոզի սկզբը և վերջը։ Ե՞նչպէս կարող էք զուք ծիծաղել, լնչպէս կարող էք աշխարհի ցականութիւններին յարմարուել։ Մեթէ զուք չէք կամենում փնտռել լոյսը։ Բուգդայի վերջին խօսքերն էին. «ամեն ինչ ապականացու է, ինչ որ այստեղ կատարում է։ Կոռեցէք առանց գաղարելու»։

Կշարունակուի.